

37. ՓԸՍԵՆ ՊԱՅՄԱՆԸ

Մին շատ հարուստ մարթու տղա մին շատ քյանսիր մարթու ըխնբկան սիրում ա։ էտ տղան հորն ասում ա.—Ես մին ըխնբկան հավան ըմ կացել, էտ ախնիգյը մըեր գոնքյանան ապրանք ա ինքյ կալալ, օգում ա քյինան ուրանց շենը, թա օգում ըս տրեսնաս, նհրետը քյինա ուրանց շենը, հղենի գրոնց կանրես, կրնիմանչիս, կրգյիդա հունց ախնիգյ ա։

Հայրը հղն յա ինում, ըխնբկանը նհրետ քյինամ ուրանց շենը։ Հղենի ճոխան էլ սուս ըրած ըն ինում, ախնիգյը խոսկ ա օգում պնց անրե, ասում ա.—Ես քեզ շիլակրեմ, թա տո՞ւ ինձ շիլակրես։ Հլիվուրը խոսկ չի քթենում, վրեր ասրե, սուս ա անում, մոկումը տղրեն ա ըսկսում ուշունց տալը, ասում՝ էլ ախնիգյ չի քթա՞լ, վրեր էս տուն պրծած անհրմանչին ա հավան կացալ։

Ախնիգյը տրեսնում ա, վրեր հլիվուրը խոսում չի, ինքյն էլ ա սուս անում։

Մին խիլա տրեզ էլ վրեր քյինամ ըն, հղենի մին մրեծ ցրեխ տրեզ ա պրտահում։ Ախնիգյը հլիվուրրեն ասում ա.—Ես քու ծրեռքատ փոնրեմ, թա տո՞ւ՝ իմ։ Հլիվուրը էլյա չի կարում խոսկ քթենա ասրե։

Վրեր կյամ ըն շենեն մուտանում, ախնիգյը խոր թառանչ ա

10—432

քաշում։ Հլիվուրն ասում ա.—Էտ խե՞ իսի խոր թառանչ քաշեցեր։ Ախճիգյն ասում ա.—Էն գոլի արտքերը հաՀրանց ըն քյինում, տրեանաս սահանց տարը կե՞րալ ա, վարալ, թա վա՞րալ ա, պիտի օտրե։ Հլիվուրը պեն չի կլնիս ինգյում, վրեչ էլ խոսում ա, մինակ ուրան տղրեն ա մակումն ուշունց տամ, վրեր իսի խրելքը պակաս ըխճրկան ա հավան կացալ։

Շենը հանրելնրբանս հլիվուրը եռ ա տրեռնում կյամ տոն, հինչ վրեր ըխճրկանան ըսկացալ ա, տղրեն նՀրեռ նաղլ ա անում, տրդան շատ ա ուրխանում, վրեր ախճիգյն էտքան խրելունք ա իլալ։ ՀաՀրն էլ շատ ա զարմանում։ Տղան ըսկսում ա ըխճրկանը խոսկրերքը մին-մին լոխ խուՀրգա անրելը, ասում ա.—Էն վրեր ասալ ա՝ ե՞ս քեզ շիլակե՞մ, թա տու՝ ինձ, ուզրեցալ ա ասրե՝ հղեն երկան ա, մին պեն նաղլ ըրա, վրեր հղրեն անց կենա, իսկ վրեր ասալ ա՝ ես քու ժրեռքատ փռնրե՞մ, թա տու՝ իմ, տրանավ էլ ուզրեցալ ա ասրե՝ հղեն ցեխ ա, ժամկան մհակ կտրրե, հանցու վրեր տեմ տաս, մինգիլ վրեր ասալ ա՝ արտքերը հաՀրանց ըն քյինում, տրեանաս սահանց տարը կե՞րալ ա վարալ, թա վա՞րալ ա՝ պիտի օտրե, տրանավ էլ ուզեցալ ա ասրե, էն ըրտերեն տարը հնձիլնկան ա տանրե ուրան պարտկերը տա՞, թա տրենական ա ուրան ըմբրրենն ածրե։

Տրանա եռը հաՀրն ասում ա.—Դե, վրեր իսի յա, հավան ըս կացալ, քյինում պեր, պեժինքյ-պեն չի հարկավրեր, թաքյ լիհա մրեր հառհնը խրելունք ինի։

Տղան քյինում ա ըխճրկանը տոնը, ըխճրկանը նՀրեռ մալրհաթ անում, պայման տինում, ասում.—Քեզ տանում ըմ, ամմա վրեր իմ պենիս խրռնրվրեցեր, իմ տանաս տուն ըմ քցրլնկան։ Ախճիգյն ասում ա՝ լնվ։

Տղան ըխճրկանը կուռնան փռնում ա, պիրում ուրանց տոն։

Ըխճրկանը հաՀրը շատ քյանիր ա ինում, տանը վրեչ մին պեն չի ինում, մենակ մին կյառն ա ինում, էտ կյառնրեն նՀրեռ ար զիրավ ինում, օրն անցկրցնում։ Մին օր էլ փրեսան ուրան դրնոտենքյը պրհողեն սուվրրցնում ա, թա քյինում դրնոտենքյը հունց տրեղավ քշի, վրեր հանորրս կյառնը նահանց նՀրեռ խառնրվե, քշի, պեր մրեր հայաթը։ Դրնոտենքյը պահողը իսի յել անում ա։ Կյառնը դրնոտանցը նՀրեռ ա քցում, պիրում։

Տա կյառնը փռնում ա մորթում, օտում։

Մին քանի օրան եռը հանրերը կյամ ա փարեն կոշտը, ասում.—Կյառնրս դրնոտանցրա նՀրեռ խառնվալ ա, նգալ ըմ տա-

նրեմ, առանց նրա օրը անց չի կենում։ Փրեսան ասում ա.— Կյառնը որ վրեր գընոտանցը նհրեռ խառնվալ ա, հաՀրաՀ դանա յա տրեռալ, քյինա տրեռ ճինանչում ը՞ա, ճոկե, եր կալ տար։ Հանրերն ասում ա.—Հունց կա՞ռող ա կյառնը դանա տրեռնա։ Տրեռնո՛ ա, վրեր փրեսան խոսում չի, եռ ա տրեռնում, քյինամ ուրան տոնը։

Ախճիգն էռ պենը վրեր տրեռնում ա, մին օր աշկ ա կյուղանում, Թաքուն քյինամ հորը կոշտը, հորը սուվրացնում, ասում.— Փրեսատ քշրարհանան ան դիբրուգյունը բրեռճեն ծրղրգյանեն ճիրում ա, քյանա Թորը յոր կոնրես կյաս, քցիս ծրղրգյանրերեն յիրա, փրեսատ հրրցրեննական ա, Թա էռ հինչ պե՞նի յրա, տու կասրես ծունկուն ըմ փռնում, վրեր ասրե հու վա՞ ծրղրգյանրերեն մաչին ծունկուն տրեռալ, տու վրել կասրես՝ հու վա՞ տրեռալ, վրեր կյառնը դանա տրեռնա։

Ախճիգն էտքանը հորը սուվրրցնում ա, եռ տրեռնամ կյամ տոն։

Մին օր հանրերն ուրան Թորը յոր ա օնում, կյամ նի մենում փրեսեն բախճան, ըսկսում Թորը ծրղրգյանրերեն յիրա քցիլը։ Փրեսան վրեր կյամ ա տրեռնում հանրերը Թորը քցած ծրղրգյանրերեն յիրա ճծունկուն փռնելիս, դնատին մանը կծում ա, կլեխ ա ինգյում, վրեր տա հանորը խրելրեն պենը չի, ախճիգն ա սուվրրցրալ, հանորը նհրեռ վրել մին պեն խոսում չի։ Ուրուգյունը քյինամ ա տոն, կրնգանեն ասում.—Մրեր պայմանը պայման ա, տու վրեր իմ պենիս խառնրվալ ըս, եռ քեզ իմ տանաս տուն ըմ քցում, քշերավ կրքյինա քու հաՀրանց տոն։ Կնեգյն ասում ա.—Պա եռ քրզ նհրեռ մին տարե ըխշադալ ըմ, էս տանան ինձ փայ չի՞ հրռնում։ Մարթն ասում ա.—Էտ տու, էտ էլ տոնը, հինչ վրեր աշկրտ փռնրե, յոր կոնրես, քրզ նհրեռ տանրես։ Կնեգյն ասում ա.—Վերջին գանումն ինձ նհրեռ պիտի մեհեռ լավ հաց նատրես, եռ էլ էս ուրուգյունը կրքյինամ իմ հարանց տոն։ Մարթը Թա՝ լավ։

Վրեր պիրում ըն հաց վրեր տինում, օտում-խմում, մարթը հաՀրփում ա, խոր քունավ հրնցնում։ Տրանա եռը կնեգյը տուն ա կյամ մին փուրգոն փրռնում, պիրում ուրան մարթին տինում մաչին, տոռնը քրլում, փուրգոնը քշիլ տամ Թուշ ուրան հարանց տոռնը, պիցրանում տոն։

Մարթը քշրարհանան վրեր աշկրերը պենում ա տրեռնում հանորը տանը, կնգանան հրրցնում ա, Թա ինձ հոր ը՞ս պերալ ըստրեղ։ Կնեգյն ասում ա.—Տու ինձ ասալ ըս տանը հինչ վրեր աշկրտ փրռ-

նրե, յոր կանչես քեզ նհրեա տանրես, ես էլ սաղ տանը մաշին հիշքան տես ու տեն յիշեցե, աշկես քեզ փոնրեց, եր կալի պերե, տանը պիլանին էլ էս ա ծրեռքես, եր կալ, տիր ջուրումը։ Ասում ա, պիրում պիլանիքյը տամ ունրան։ Մարքն էլ թա՝ էն տոնն ա-ռանց քեզ կապեկ չանժի, եռ տրեռ քյինանք։ Սորաս եռը ես իմ պայմանես փոխում եմ։